

## Տ. ՎԱՀՐԱՄ ՔԱՀԱՆԱ ՄԵԼԻՔՅԱՆ

(ավազանի անունը՝ Միքայել)

Ծնվել է 1976 թ. մայիսի 22-ին Երևան քաղաքում:

1982-1993 թթ. սովորել է փնդի Մուշեղ Իշխանի անվան № 58 միջնակարգ դպրոցում, որն ավարտել է արծաթե մեդալով:

1991 թ. երգել է Արարատյան Հայրապետական թեմի «Մանկունք» մանկական երգչախմբում:

1993-1998 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

1997 թ. հունվար-ապրիլ ամիսներին մեկնել է Կանադա՝ «School of Geoffrey R Conway School of Television Broadcasting»՝ մասնակցելու եռամսյա դասընթացների TV Broadcasting բնագավառում, որը ավարտել է լավագույն գնահատականներով:

1998-1999 թթ. ուսումը շարունակել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Զ լսարանում:

1999 թ. աշխատել է Կաթողիկոսարանում իբրև գործավար քարտուղար, ինչպես նաև մասնակցել է Ֆինլանդիայում կայացած «Սինդեսմոսի» հերթական՝ XVII համագումարին իբրև Հայ Եկեղեցու ներկայացուցիչ և դիտորդ: Նույն թվականի օգոստոսին նշանակվել է Ազգային-Եկեղեցական ժողովի գումարման և Կաթողիկոսա-

կան ընտրությունների կազմակերպման գրասենյակում իբրև գործավար քարտուղար:

2000 թ. Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ նշանակվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի տնօրենի օգնական: Միաժամանակ ներգրավվել է ԵՀԽ-ի Հայաստանյան գրասենյակի՝ Կլոր Սեղանի աշխատանքների մեջ, տեղական ղեկավարման խորհրդում (Local Board) իբրև Հայ Եկեղեցու ներկայացուցիչ:

2000 թ. հոկտեմբերին պաշտպանել է ավարտաճառ՝ «Հուստինիանոս կայսեր կրոնական քաղաքականությունը և Կ. Պոլսի Ե Տիեզերական ժողովը» թեմայով, և արժանացել «լավ» գնահատականի:

2001 թ. հուլիսի 28-ին, ձեռամբ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի, ձեռնադրվել է քահանա: